ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԴՊՐՈՑՈՒՄ՝ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻՆ

Ա. Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Գավառի թիվ 5 հիմն. դպրոցի
պատմության ուսուցչուհի

«Ոչ մի հետաքրքիր նորույթ ի հայտ չի գալիս առանց համագործակցության»:
Ջեյմս Ուայթսոն

Կրթական համակարգը գործում ու զարգանում է կոնկրետ հասարակական միջավայրում, ժամանակատարածքային որոշակի պայմաններում: Ուստի այսօր անհնար է արդյունավետ դասավանդել՝ առանց հաշվի առնելու ժամանակի փոփոխությունները: Հայաստանի Հանրապետության հանրակրթության ոլորտում իրականացվող բարեփոխումներն ուղղված են ուսումնական գործընթացի որակի և արդյունավետության բարձրացմանը: Դասավանդման և ուսումնառության ավանդական ձևերը կիրառելով, առանց նորագույն մեթոդների ու տեխնոլոգիաների հաշվառման՝ անհնար է հաղորդել նոր գիտելիքներ ու ձևավորել հմտություններ, որոնք անհրաժեշտ են Հայաստանի Հանրապետության ապագա քաղաքացուն: Հետևաբար դպրոցում անհրաժեշտ են դասավանդման և ուսուցման նոր մոտեցումներ, որոնք ուղղված կլինեն այդ խնդիրների լուծմանը: Նոր մոտեցումները հատկապես կարևորվում են պատմության ուսուցման բնագավառում, որն իր ուրույն տեղն ունի հասարակական գիտությունների շարքում: Հանրակրթական դպրոցներում «Պատմություն» առարկայի հիմնական նպատակն է «սովորողներին ամբողջական գիտելիքներ հաղորդել մարդու և հասարակության մասին, դաստիարակել ազգային և համամարդկային արժեքներով օժտված, սոցիալապես ակտիվ քաղաքացի, ձևավորել սեր և հետաքրքրություն սեփական և այլ ժողովուրդների պատմության ու մշակույթի նկատմամբ, հայրենասիրություն և ազգային հպարտություն, հայրենիքին ծառայելու և այն պաշտպանելու պատրաստակամություն»[1]:

Հայոց և համաշխարհային պատմությունների դասավանդման ընթացքում համագործակցային նորագույն մեթոդների կիրառումը հնարավորություն է տալիս ավելի հանգամանորեն վերլուծելու պատմական փաստերը, իրադարձությունները, գործընթացներն ու

[1] Տե՛ս Ղուկասյան Ա., Գյուլբուդաղյան Ա., Հայոց պատմություն, Ուսուցչի ձեռնարկ, Երևան, «Մանմար», 2007, էջ 8:

երևույթները, նպաստում նրանց միջև պատճառահետևանքային կապերի բացահայտմանը, ստեղծագործական մտածողության և պատմական վերլուծական հմտությունների ու կարողությունների զարգացմանը: Այս բնագավառում պատմաբան-մանկավարժի խնդիրն է յուրաքանչյուր սովորողի համար ստեղծել այնպիսի նպաստավոր միջավայր, օգտագործել այնպիսի մեթոդներ, կիրառել հնարներ, որոնց շնորհիվ հնարավոր կլինի խրախուսել սովորողների նախաձեռնողականությունը և ստեղծագործական, վերլուծական միտքը: Համագործակցային ուսուցման բազմաթիվ մեթոդներից, մեթոդական հնարներից և եղանակներից պատմության ուսուցման բնագավառում կառանձնացնենք զննականության մեթոդի եղանակներ համարվող «Խմբային հետազոտություն», «Հասկացությունների քարտեզագրում», «Պատմական հիշողության օղակներ», «Ապագայի անիվ», «Խճանկար», «Շրջագայություն պատկերասրահում», «Տ-աձև աղյուսակ», «Վենի դիագրամ», «ԳՈՒՍ», «Մտագրոհ» մեթոդներն ու հնարները:

Օրինակ 1. «Հասկացությունների քարտեզագրում»: Կարելի է կիրառել նոր թեմայի ուսումնասիրության ժամանակ.



Օրինակ 2. «Վենի դիագրամ»: Կատարվում է եռաստիճան օղակներով Սարդարապատ-Ավարայր-Վարդանակերտ խորագրով:



Օրինակ 3. «Մտագրոհ»: Մտագրոհ վարժության միջոցով կարելի է ստուգել երեխաների գիտելիքները կարևոր տերմինների շուրջ:



Օրինակ 4. «ԳՈՒՍ»: Կարելի է կիրառել դասի ամփոփման ժամանակ:

Գիտեմ	Ուզում եմ սովորել	Սովորել եմ

Ժամանակակից մանկավարժական հնարքները՝ համագործակցային ուսուցումը, նախագծային մեթոդը, նոր տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը, համացանցը, օգնում են իրականացնել դասավանդման աշակերտակենտրոն մոտեցում, ապահովում են հասցեագրված ուսուցում՝ ելնելով սովորողների հակումներից: Անդրադառնանք համագործակցային ուսուցմանը:

Ջոն Դյուին, ընդգծելով կրթության կարևորությունը, համագործակցային ուսուցումը դիտարկում է որպես ուսուցման այնպիսի կառուցակարգային մեթոդ, որը քաղաքացիներին սոցիալ-ժողովրդագրական համակարգում համագործակցության սկզբունքներով ապրելու ունակություններ է հաղորդում[1]: Համագործակցային ուսուցումը համատեղ սովորելու եղանակ է, երբ խմբի յուրաքանչյուր անդամ կամ ամբողջ դասարանը ներգրավված է ակտիվ ուսուցման մեջ, իսկ նոր գիտելիքները մշակվում և յուրացվում են աշակերտների միջոցով: Համագործակցային ուսուցման արդյունավետ միջոց է խմբային աշխատանքը, որի ընթացքում սովորողները փորձում են պաշտպանել կամ հիմնավորել իրենց տեսակետները: Համագործակցային ուսուցման ընթացքում կարևորվում է ոչ միայն ակադեմիական գիտելիքների և հմտությունների ձեռքբերումը, այլև խմբային գործընթացի միջոցով հմուտ համագործակցողների և գիտելիքների ակտիվ կիրառողների ձևավորումը: Խոսելու, բացատրելու, բանակցելու, բանավիճելու և հարցեր տալու միջոցով սովորողները համագործակցային միջավայրում ձևավորում են իրենց հմտությունները: Սովորողներն իրենք են քայլ առ քայլ ձեռք բերում գիտելիքներ՝ սխալվելով ու փորձարկելով, համատեղ քննարկելով ու եզրահանգումներ կատարելով: Խմբային աշխատանքը էապես մեծացնում է սովորողների ակտիվությունը ուսումնական գործընթացում: Սովորողն ավելի լավ է սովորում, երբ ակտիվ մասնակցում է դասապրոցեսին, ինքնուրույն արտահայտում մտքեր: Ուստի պատմության «ուսուցման առաջնային նպատակը պետք է լինի ոչ թե գիտելիքների որոշակի ծավալի

[1] Տե՛ս Վարդումյան Ս., Ջաղինյան Ն., Հարությունյան Լ., Վարելլա Գ. Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, Երևան, «Նոյյան Տապան», 2005, էջ 175:

յուրացումը, այլ «սովորել սովորեցնելը»1: Այսինքն՝ արդյունավետ դասը կարող է հիմնված լինել միայն փոխկապակցվածության, փոխհամագործակցության, դասի բովանդակության և դրա մեթոդական հիմքերի համապատասխանության վրա: Մասնավորապես ներկայացնենք համագործակցային մեթոդների կիրառմամբ պատմության դասի պլանավորման մեկ օրինակ.

Դասարանը՝ VIII

Դասի թեման՝ Արևմտյան Հայաստանը XIX դարի առաջին կեսին:

Դասի նպատակը և խնդիրները՝

Սովորողները պետք է իմանան՝

- Արևմտյան Հայաստանի վարչատարածքային բաժանման մասին,
- 1806-1812թթ. ռուս-թուրքական պատերազմի և Բուխարեստի պայմանագրի մասին,
- 1828-1829թթ. ռուս-թուրքական պատերազմի և Ադրիանապոլսի պայմանագրի մասին:

Սովորողները պետք է կարողանան՝

- Ներկայացնել Արևմտյան Հայաստանում տիրող սոցիալ-տնտեսական իրավիճակը,
- Ներկայացնել 1806-1812թթ և 1828-1829թթ. ռուս-թուրքական պատերազմների ընթացքը, ռազմական գործողությունները, հայերի մասնակցությունը,
- Համեմատել 19-րդ դարի սկզբի ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմների արդյունքները:

Դասի ընթացքը

Կազմակերպական մաս – աշակերտների հաշվառում, խմբերի կազմում:

Դասը կազմակերպվում է «ԽԻԿ» համակարգով:

Խթանման փուլ – խթանման փուլում սովորողների գիտելիքները բացահայտող հարցեր ենք ուղղում.

- Քանի՞ վիլայեթներից էր բաղկացած Արևմտյան Հայաստանը:
- Ո՞րն է ռուս-թուրքական պատերազմի կարևոր իրադարձությունը:
- Քարտեզի վրա ցույց տալ Ադրիանապոլսի պայմանագրով Ռուսաստանին անցած տարածքները:

Իմաստի ընկալման փուլ

---

[1] Տե՛ս Հարությունյան Ա., Հարությունյան Կ., Խրիմյան Ս. և ուրիշներ, Համագործակցային ուսուցում, Երևան, «Անտարես», 2006, էջ 10:

Դասարանը բաժանում ենք չորս խմբերի, քանի որ կարծում ենք, որ յուրաքանչյուր տեսակետ առավել արդյունավետ գնահատելու համար սովորողներին պետք է բաժանել փոքր խմբերի, որպեսզի քննարկումների ընթացքում փորձեն պաշտպանել կամ հիմնավորել իրենց տեսակետները: Խմբերին տրամադրվում են հետևյալ հանձնարարությունները.

I խումբ – Ներկայացնել Արևմտյան Հայաստանի քաղաքական իրադրությունը՝ քարտեզի վրա ցույց տալով Արևմտյան Հայաստանի վարչական բաժանումը:

II խումբ – Ներկայացնել 1806-1812թթ. ռուս-թուրքական պատերազմը և Բուխարեստի պայմանագիրը:

III խումբ - Ներկայացնել 1828-1829թթ. ռուս-թուրքական պատերազմը և Ադրիանապոլսի պայմանագիրը:

IV խումբ - Համեմատել 1826-1828թթ-ի ռուս-պարսկական և 1828-1829թթ-ի ռուս-թուրքական պատերազմները՝ կիրառելով համեմատական մեթոդը, «Վենի դիագրամ» մեթոդի միջոցով վեր հանել դրանց դրական և բացասական հետևանքներր հայության համար



Հատկացված ժամանակը լրանալուն պես յուրաքանչյուր խումբ ներկայացնում է կատարած առաջադրանքը, իսկ մյուս խմբերը լրացնում են բացթողումները, ճշտում սխալները:

Կշռադատման փուլում՝ կատարվում է ամփոփում, վերլուծական մտածողության ձևավորման նպատակով լրացնում ենք հետևյալ աղյուսակը՝ առանձնացնելով իրադարձությունները և գտնելով պատճառահետևանքային կապերը.

Պատերազմ	Տարեթիվ	Կարևոր իրադարձություն	Պայմանագրի կնքում	Արդյունք

Աղյուսակը լրացնելուց հետո խմբային աշխատանքի արդյունավետության գնահատման սանդղակով գնահատում ենք խմբերի աշխատանքը: Յուրաքանչյուր չափանիշ գնահատվում է առավելագույնը 2 միավոր:

		I	II	III	IV
1.	Խմբի կազմակերպվածությունը				

2.	Խմբի անդամներն օգնում էին միմյանց հասկանալու նյութը				
3.	Խմբի անդամները տալիս էին մտածողությունը խթանող հարցեր				
4.	Օրինակների, փաստերի օգտագործում				
.	Խմբի անդամները պարբերաբար հետադարձ կապի մեթոդն էին կիրառում				

Համագործակցային ուսուցման կազմակերպման ընթացքում սովորողների կողմից ուսուցանվող նյութի լիարժեք յուրացման, դասավանդման կատարելագործման, ճանաչողական կարողությունների զարգացման, հետաքրքրասիրության, վերլուծական մտածողության, ինքնուրույն որոնողական գործունեության, տեղեկույթն ընկալելու, մշակելու, փոխանցելու, գնահատելու ունակությունների զարգացման նպատակով կիրառվում են նաև տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները:

Սովորողներին կարելի է խորհուրդ տալ հետազոտության ընթացքում օգտագործել աղյուսակներ, գծապատկերներ, որոնք օգնում են ավելի պատկերավոր դարձնելու կատարվող հետազոտությունը: «Խմբային հետազոտության» մեթոդը հնարավորություն է տալիս հայոց և համաշխարհային պատմությունների բարդ ու ծավալուն թեմաները բազմակողմանիորեն ուսումնասիրել՝ օգտվելով տեղեկատվական տարբեր աղբյուրներից: Ներկայացնենք նմանատիպ դասի մեկ օրինակ:

Դասարանը – VIII

Առարկան – Համաշխարհային պատմություն

Թեման - «Ցեղասպանություն», «Հայոց մեծ եղեռն», «Սեյֆո», «Հոլոքոստ», «Ռուանդա»:

Նպատակը և խնդիրները

Սովորողները պետք է իմանան՝

- «Ցեղասպանություն» հասկացությունը, հայոց ցեղասպանության իրականացման փուլերը:
- Ցեղասպանության, Սեյֆոյի, Հոլոքոստի, Ռուանդայի հետ կապված կարևորագույն փաստերը:

Սովորողները պետք է կարողանան՝

- ներկայացնել առաջադեմ հասարակության վերաբերմունքը ցեղասպանությունների նկատմամբ:

Արժեքային համակարգ

- գնահատել ժողովրդավարական արժեհամակարգի կարևորությունը մարդկության խաղաղ գոյատևման համար:

Դասի ընթացքը

«Խմբային հետազոտման» մեթոդի կիրառմամբ դասարանը բաժանվում է երեք խմբի: Տրվում են առաջադրանքները:

I խումբ – «Ցեղասպանություն» հասկացությունը, գաղափար հայոց Մեծ եղեռնի և Սեյֆոյի մասին:

II խումբ – Հոլոքոստ

III խումբ – Ռուանդա

Յուրաքանչյուր խումբ, նախօրոք ստանալով համապատասխան հանձնարարությունները, հավաքում է տեղեկություններ, դրանք վերլուծում, համադրում, եզրահանգումներ կատարում:

Երբ խմբերը ներկայացնում են իրենց աշխատանքը, սովորողներից մեկը խմբի պատրաստած շնորհանդեսի միջոցով քայլ առ քայլ ցուցադրում է փաստերը, իրադարձությունները, նշված գործիչների և հերոսների նկարները, ավերված քաղաքներն ու գյուղերը: Ցուցադրվում են հատվածներ «Վրիժառուներ», «Հոլոքոստ» և այլ ֆիլմերից:

Կատարում ենք խմբի հետազոտական աշխատանքի գնահատում՝ օգտվելով հետևյալ սանդղակից:

		I	II	III
1.	Արդյունավետ հավաքագրված տվյալներ			
2.	Տվյալների հստակ վերլուծություն			
3.	Տրամաբանական եզրահանգումներ			
4.	Աշխատանքի որակ			
5.	Շնորհանդեսի ներկայացում			

Այսպիսով, արդյունավետ է այն դասը, որտեղ ուսուցիչը կիրառում է պատմության դասին ներհատուկ համագործակցային ուսուցման մեթոդներ, հնարներ ու եղանակներ, որոնք նպաստում են սովորողների մեջ համամարդկային, ազգային, պետական մտածելակերպի ձևավորմանը, գիտելիքների ամրապնդմանը, հետաքրքրությունների, կարողությունների, ունակությունների, հմտությունների զարգացմանը, պատմական ժամանակաշրջանի ճիշտ ընկալմանը, երևույթների, իրադարձությունների ու փաստերի, պատճառահետևանքային կապերի բացահայտմանն ու օրինաչափությունների ըմբռնմանը, ճգգրիտ եզրահանգումների կատարմանը: Կիրառվող մեթոդները, հնարները և եղանակները թույլ են տալիս բարձրացնել պատմության ուսուցման արդյունավետությունը և այն հնարավորինս համապատասխանեցնել պետական կրթական չափորոշիչների պահանջներին:

Բանալի բառեր՝ *համագործակցային ուսուցում, խմբային աշխատանք, աշակերտակենտրոն ուսուցում, խմբային հետազոտություն, տեղեկատվության մշակում, պատմության դասավանդում:*

Օգտագործված գրականություն

1. Վարդումյան Ս., Ջաղինյան Ն., Հարությունյան Լ., Վարելլա Գ. Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, Երևան, «Նոյյան Տապան», 2005, 402 էջ:
2. Հարությունյան Ա., Հարությունյան Կ., Խրիմյան Ս. և ուրիշներ Համագործակցային ուսուցում, Երևան, «Անտարես», 2006, 60 էջ:
3. Ղուկասյան Ա., Գյուլբուդաղյան Ա. Հայոց պատմություն, Ուսուցչի ձեռնարկ, Երևան, «Անտարես», 2007, 60 էջ:

USAGE OF INTERACTIVE METHODS AT HISTORY LESSONS IN SCHOOLS

A. R.VARDANYAN
Teacher of History at N 5 School of Gavar

Team work makes the teaching process more attractive and interesting promoting creation of equal opportunities for the pupils' participation. During the team work all the members of the group or the whole class are actively involved in teaching process, and the new material is worked out and obtained by the pupils. Members of the group work together achieve the common goal and understand that they can only reach it as a team. This is a positive co-ordination and the most important peculiarity of the team work.

ПРИМЕНЕНИЕ ИНТЕРАКТИВНОГО МЕТОДА ОБУЧЕНИЯ НА УРОКАХ ИСТОРИИ В ШКОЛЕ

А. Р. ВАРДАНЯН
Учитель истории основной школы N 5 г. Гавар

Метод интерактивного обучения (взаимосотрудничества) делает процесс обучения более интересным и занимательным, что способствует созданию равных условий для участия учащихся в процессе обучения. В процессе интерактивного метода каждый член группы или весь класс активно взаимодействует, а новая информация разрабатывается и усваивается с помощью самих учеников. Члены каждой группы взаимодействуют друг с другом для достижения общей цели и осознают, что для этого необходимо, чтобы каждый участник достиг своей цели. Взаимозависимость в процессе обучения является положительным и главным критерием интерактивного метода.